

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻՆ
ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԻ ՓՈՐՉ

Կարնո բարբառը համարվում է հայերենի կենդանի բարբառների մեջ ամենամեծերից մեկը: Բարբառաբանության, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում այս բարբառով խոսող մի ստվար զանգված հանգրվան է գտել Շիրակի դաշտում, զգալի մասն էլ՝ Ջավախքում և այլուր: 1972 թվից ի վեր ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի լեզվաբան-բարբառագետները ձեռնարկել են հատուկ ծրագրով հայերենի բարբառների գրառման աշխատանքները՝ հրնթացս կուտակված նյութերը մեկնաբանելու, բարբառային ամենատարբեր իրողությունները ուսումնասիրության առարկա դարձնելու և հայ բարբառագիտության զարգացմանը նպաստելու միտումով: Տարիների տքնաջան հավաքչական աշխատանքներով կուտակված 500 խոսվածքային միավորների մեջ քիչ չեն մաս Կարնո բարբառին առնչվող գրանցումները: Շիրակի տարածքի գյուղերից մեզ հաջողվել է գրառել Մշո գավառի բազմաթիվ գյուղերից, Խուֆից, Սասունից գաղթածների մայրենի խոսվածքները: Այս տարածաշրջանում ոչ պակաս արդյունավետ եղավ Կարնո բարբառը կրող կարսեցի, բասենցի գաղթականների առաջին, երկրորդ սերնդի ներկայացուցիչների հետ հանդիպումներն ու նրանց մայրենի խոսվածքների գրանցումները: Ներկայումս այդ բարբառը կրող երրորդ, չորրորդ սերնդի ներկայացուցիչները հաղորդակցվում են միանգամայն օրինաչափորեն ձևավորված միջբարբառային խոսվածքով: Եթե դրան հավելենք մաս գրական արևելահայերենի հզոր ազդեցությունը, ապա պարզ կդառնա, թե որքան կարևոր էր վերջին 25 տարիների ընթացքում Շիրակի տարածաշրջանի *Ագատան, Գետք, Մարմաշեն, Ոսկեհասկ, Ախուրիկ, Հայկավան* գյուղերում պարբերաբար ձեռնարկված հավաքչական աշխատանքները:

Հայերենի բարբառների բառապաշարից ընտրված թեմատիկ առանձին խմբի, սովյալ դեպքում՝ ժամանակակից բառերի քննությունը հետաքրքիր շատ իրողություններ է ի հայտ բերում: Կարնո բարբառի տարբեր խոսվածքների գրանցումներից ընտրել ենք *ԱՌ-ԱՎՈՏ* օրապահին վերաբերող բառանվանումները:

ՆՀԲ -ում այս բառի դիմաց գրված է. «*Առաւօտ* - այգ, սկիզբն տունջեան, արևագալ. առ հարոյթ (առյարոյթ), այսինքն՝ «Ժամ յառնելոյ ի քնոյ»:¹

Արմատական բառարանում Հ.Աճառյանը թեև չի ստուգաբանում *առավոտ* բառը, բայց փաստարկներ է բերում *առ* նախդիրից և *աւօտ* արմատից կազմված լինելու օգտին: Ըստ նրա՝ *աւօտ* արմատը «ժամանակ» է նշանակում, և որ այդ բառից են կազմված *շաղաւօտ* (գիշերվա ժամը 4-ը՝ ըստ արևելյան ժամահաշվի) և *կամաւօտ* (գիշերվա ժամը 5-ը) ժամանումները:²

Գ. Ջահուկյանը *առավոտ* (առաւաւտ) համարում է հնդեվրոպական **aus* - լուսավորել (*ausos* - արշալույս) ձևից սերող բառ՝ առ նախածանցով և աւտ վերջածանցով, իսկ արմատը աւ-ն է:³ Նույն կարծիքին է մաս Էդ. Աղայանը. «Մենք արմատն ենք համարում աւ, իսկ առ- և աւտ(օտ)՝ ածանցներ»:⁴

1) *Առավոտ* հասկացության դիմաց Շիրակի տարածքի բոլոր խոսվածքներում առկա է *հ'առավօղ* համապատասխանությունը՝ հիմնականում մակբայական կիրառությամբ: Ասենք՝

Հ'առավօղ էրտանկ բրդի բագար (Գյումրի):
Յէսօր հ'առավօղ շաղ թէգ տեղէս հէլա (Կարսի Փաղոքրվան՝ գրանցված Ոսկեհասկ գյուղում):

Օրվա պահերի անվանումները հիմնական բառաֆոնդի ամենագործուն շերտի բառերն են, որոնք տարբեր բարբառներում հանդես են գալիս լեզվամտածողության

¹ Տե՛ս ՆՀԲ, հ. 1, Եր., 1979, էջ 298:
² Հ.Աճառյան, ՀԱԲ, Եր., հ. 1, էջ 256:
³ Գ. Ջահուկյան, ՀԼՊ. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 159:
⁴ Է.Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 24:

նույնությունից բխող կադասայարային ձևերով: Ժամանակը հաշվարկելիս մարդիկ ամենից առաջ հիմք են ընդունել անխախտ հաջորդականությամբ միմյանց հերթագայող երևույթները և հատկապես՝ ցերեկվա և գիշերվա հաջորդականությունը: Համաժողովրդական գործառույթ ունեցող բառաձևերի կողքին հանդես են գալիս ժողովրդի տվյալ հատվածի կենսակերպի յուրահատկությունից բխող եզակի բառանվանումներ, որոնք կարող են այլ տարածքներում չկրկնվել:

Հայերենի բարբառներում *առավոտ* հասկացության բառանվանումները ներկայանում են բազմաթիվ հոմանիշային տարբերակներով: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ այդ օրապահին ընդգրկում է բավական երկար ժամանակահատված՝ գիշերավարտից մինչև կեսօր: Ահա այդ անորոշությունից ձեռքբաղվելու, հնարավորինս ճանաչելի, ընկալելի դարձնելու միտումով օրվա այդ պահին անվանելիս մարդիկ ընտրել են տվյալ ժամանակահատվածին բնորոշ որևէ հատկանիշ և դրել անվանման հիմքում: Առավել ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դրանք առավոտվա տարբեր պահերն են մատնանշում:

ա) Վաղ առավոտ լինելու հանգամանքն ընդգծվել է *գիշեր* բառով կազմված ձևերում, ինչպես, ասենք, *գիշեր* և հան արմատներն իրար կապելով և դրանով *գիշերավարտի* գաղափարն արտահայտելով *գիշերհանա* բառաբաղադրությամբ:

Հ'առավոտ-գիշերհանա սաղանի պէս դէմըս յէլավ (Կարսի Փաղղորվան):

Գիշեր բառի գործիականի քարացած հոլովածևը՝ *գիշերով*, «վաղ առավոտ, գրեթե գիշեր, դեռ լույսը չբացված» նրբինաստներն է ներառում, այլ խոսքով՝ գործողությունը ավելի շուտ գիշերը, քան թե առավոտյան կատարվելու հանգամանքն է մատնանշվում: Այդ *գիշերով* մակբայի գործառության առիթով տեղին է նշել Հր.Աճառյանի հետաքրքիր մեկնաբանությունը հետգրաբարյան շրջանում առաջացած *վա* հոլովման մասին, ինչին նա անդրադարձել է Ն.Նախիջևանի բարբառի քննության առիթով: Նա գտնում է, որ *վա* հոլովման ենթարկվող ժամանակահիշների գործիականը պետք է լիներ առավոտվանով, գիշերվանով, այսինքն՝ գործիականի համար - *վանով* վերջավորությունն է օրինաչափ, սակայն այդ դեպքում *գիշերվանով* բառը կհասկացվի «գիշերվանն էլ միասին հաշվելով»: Ուստի գործիականը կազմվում է պարզ -ով վերջավորությամբ: Իսկ ժամանակահիշներն առհասարակ գործիական չունեն»⁵ Նշենք, որ գործիական հոլովով միջոցի խնդիր է ձևավորվում, իսկ տվյալ դեպքում գործ ունենք ժամանակի պարագայի հետ:

բ) Առավոտ օրապահի անորոշությունը հաղթահարելու, ավելի ստույգ ժամանակահատված ցույց տալու, ասենք, վաղ առավոտ լինելու հանգամանքն ընդգծելու նպատակով են գործառել *հ'առավոտ կանուխ* բառակապակցությունը:

Հ'առավոտ կանուխ ճամպա հընգավ (Մարմաշեն):

2) Ծագումնաբանական մի առանձին խմբում էլ կարելի է առանձնացնել բնիկ հայերեն *լույս* արմատից սերող բառանվանումները: Միանգամայն բնական է, որ *առավոտ* հասկացությունն առնչվում է արևի լույսի տարածվելու գաղափարի հետ: *Մութ* և *լույս* արմատներով ստեղծվել են վերլուծական բաղադրություններ՝ շաղկապական, հարադրական բարդություններ: Օրինակ՝

Մուտուլուս էր, օր խօրօզը կանճեց (Ազատան):

Լույս և դեմ արմատների բաղադրությամբ առաջացած բառաձևերին բնորոշ է վաղ լուսաբաց բառինաստը: Դրանք մատնացույց են անում լույսը բացվելուն նախորդող պահը, ինչպես, ասենք, *լուսուղէմ* բառաձևը:

Լուսուղէմ քիճըմ թօն էգավ (Գետք):

Մրան համարժեք է Արարատյան բարբառի խոսվածքներում առկա *լուսաղեմին* բառանվանումը, որն անցել է նաև գրական արևելահայերենին:

Փոխառյալ *թարաֆ* (կողմ) բառով հայաբանության արժեք ունեցող նկարագրական տիպի ժամանակահիշներ են ստեղծվել, որոնք լայնորեն գործառում են Կարենո բարբառի խոսվածքներում, ինչպես՝ *լուսու թարաֆ, հ'առավոտվա թարաֆ* :

Բարբառախոսների հավաստմամբ՝ կիրառելի է նաև *ատամա մուտ* (աղամամութ) համապատասխանությունը, որն, անշուշտ, կապվում է Աղամ նախահոր հետ՝

⁵ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, *Ջեննայան Նոր Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Եր., 1925, էջ 187:*

մատնանշելով աշխարհաստեղծման այն պահը, երբ իրարից անջատվել են խավարն ու լույսը: Նմանատիպ բառերը գուցե և հաճախական չեն, սակայն հասկանալի են բոլոր հավատացյալներին և խոսքում կարող են ունենալ լրացուցիչ գործառնական բաշխում: Ընդ որում՝ բառակապակցության արժեքով (հատկացուցիչ-հատկացյալ կառույց), ինչպես՝ Առանա մուտ, Առանու մըտի հեղ: Այսպես՝

Առանու մըտի հեղ պարբս վողի վըրա էր (Կարսի Ուզունքիլիսա՝ գրանցված Ոսկեհասկ գյուղում):

3) Ծագումնաբանական առանձին խումբ են կազմում *առավոտ* հասկացության դիմաց փոխառյալ *սարահ* ձևի հնչյունափոխված տարբերակները ներկայացնող բառանվանումները: Թուրքերենի միջնորդությամբ պարսկերենից փոխառյալ *սարահ* ժամանականիշը «շուտ, կանուխ, վաղ» նրբինաստներն ունի և խոսքի մեջ ժամանակի պարագա է ձևավորում՝ ընդգծելով գործողության՝ վաղ առավոտյան կատարվելը:

Բացառապես մակբայական գործառույթ դրսևորող *սարահ* փոխառյալ բառից սերող *սարահտան* կամ *սարախտան* ժամանականիշը լայն կիրառություն է ստացել հայերենի հատկապես արևմտյան խմբակցության բարբառներում: Լայնորեն գործառու է նաև Կարճ բարբառի տարբեր խոսվածքներում, ինչպես՝ Գյումրի քաղաքի, Կարսի Փաղղըվան, Գրգըլխախախ, Ուզունքիլիսա, Աղջաղալա, Բասենի մի շարք գյուղերից գաղթած շիրակցիների խոսքում:

Սարախտան կիսուրը քրնդիրը վատեց (Բասեն):

Վաղ առավոտ լինելու հանգամանքն ընդգծելու համար քուրքերենից փոխառյալ *թեզ* (շուտ) ձևի զուգորդությամբ սաստկական արժեք է ձեռք բերել *սարախտան թեզ* բառակապակցությունը: Այսպես՝

Սարախտան թեզ տերդերը մըղավ ժամը (Ազատան):

4) *Առավոտ* հասկացության դիմաց առկա բառանվանումների հոմանիշային տարբերակներից մեկն էլ Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղում մեր կողմից գրանցված՝ Կարսի Գրգըլխախախ գյուղի խոսվածքում առկա *աղջամուղդ* համապատասխանությունն է: ՆՀԲ-ում *աղջամուղդ*-ի համար նշվում է նաև աղտամուղտ, աղտումաղտ հոմանիշները, որոնք գործառու են «մութ, մառախուղ, խավար» իմաստներով:⁶ Նշանավոր հայագետ Ա. Մեյեն աղջամուղջը բառը առանձին քննության առարկա է դարձրել «Հայերեն ստուգաբանություններ» շարքում: Ըստ Մեյեի՝ դա մի կրկնավոր բարդություն է, որ առաջացել է հայերենում կիրառվող երկու ուշագրավ միջոցներով:

1) ա և ու ձայնավորների հերթագայությամբ, ինչպես՝ խառնիխտուն... և 2) մ-ի հավելումով կամ բառակազմի բաղաձայնի փոխարինում մ-ով, ինչպես՝ հացումաց...: Ապա ավելացնում է . «Այս երկրորդ միջոցը բավական հազվադեպ է հին բնագրերում, բայց ազատ կիրառվում է ժամանակակից ժողովրդական լեզվում: Ուստի աղջամուղջ-ի սկզբնական ձևը աղջ է»: ⁷ Իսկ այդ արմատին Մեյեն զուգադրում է հնդեվրոպական այլ լեզուներում առկա ձևեր՝ անձրև նշանակությամբ: ՆՀԲ-ում աղջամուղջ-ի համար նշվում է «մութ, մառախուղ, խավար» իմաստները, և բերվում են վկայություններ աղտամուղտ, աղտումաղտ հոմանիշային տարբերակների մասին:⁸ Այդպիսի փաստի առկայությամբ անառարկելի ենք համարում աղջամուղդ բառաձևի աղերսը հայոց հին օրացուցային համակարգում վկայված գիշերային 2-րդ ժամանակն հետ: Այլ խոսքով՝ Կարսի Գրգըլխախախ գյուղի խոսվածքում առկա աղջամուղդ ժամանականիշը աղջամուղջ ժամանակն մնացուկային ձևն ենք համարում:

5) *Առավոտ* հասկացության դիմաց ինքնատիպ մի ժամանականիշ էլ՝ *աղոթրան*, գործառու է ինչպես Մշո, Վանի, Խոյի բարբառներում, այնպես էլ Կարճ բարբառի մի շարք խոսվածքներում՝

Աղոթրան օր բածվալ, շուրըն շօրերըս հակա, տընէն հէլա (Բասենի Նարման գ.):

Այս աղոթրան (աղոթարան) ածանցավոր բառը կարող էր նշանակել և՛ աղոթելու ժամանակ, և՛ աղոթելու տեղ: Վերջին իմաստն ավելի հավանական է թվում (-արան ածանցին առավել բնորոշ է տեղ ցույց տալը): Կարելի է կարծել, որ դեռ արևապաշտության շրջանում առավոտյան աղոթքն արվել է դեմքով դեպի արևելք՝ «աղոթարան»: Աս-

⁶ Տե՛ս ՆՀԲ, հ. 1, Եր., 1979, էջ 298:

⁷ Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 154:

⁸ Տե՛ս ՆՀԲ, հ. 1, Եր., 1979, էջ 298:

տիճանաբար կատարվել է տեղ-ժամանակ անցում, և արդյունքում առաջացել է *աղօթրան* ժամանականիշը՝ *արևազայի ժամ* իմաստով: Այդ սովորությունը ծիսապաշտամունքային բնույթի այլ տարրերի հետ ժառանգորդաբար անցել է քրիստոնեությանը, և աղօթրան բառն էլ բարբառներում շարունակել է գործառել ժամանականիշի արժեքով:

6) *Առավոտ* հասկացության իմաստով Շիրակի տարածքի խոսվածքներում գործառող հոմանիշային տարբերակներ կան հայ ժողովրդական հեքիաթներում: Վաղնջական ժամանակներից ժողովրդի շուրթերին գոյատևող, սերնդեսերունդ փոխանցվող հեքիաթներն անսպառ շտեմարան են բարբառային իրողություններն ուսումնասիրողների համար: Բասենի խոսվածքում առկա «խօրօգխօսումին» ժամանականիշ մակբայը կոպիտ մոտավորությամբ մատնանշում է վաղ լուսաբացը: Այն, հավանաբար, կապվում է հայերենում և այլ լեզուներում ընտանի կենդանիների և թռչունների վարքի միջոցով օրապահը որոշելու սովորության հետ:

Ամփոփելով «առավոտ» հասկացության իմաստով հայերենի բարբառներում և մասնավորապես՝ Շիրակի տարածաշրջանում գործառող Կարնո բարբառի խոսվածքներում առկա բառանվանումների քննությունը՝ գալիս ենք եզրահանգման, որ գիշերավարտից մինչև կեսօր ձգվող այդ օրապահի բառանվանումներին բնորոշ է հոմանիշային բազմազանությունը:

Հայոց լեզվի պատմության, ազգագրության, պատմագիտության, քանազիտության և այլ բնագավառների հետ առնչվող շատ հարցերի պատասխանը կարելի է գտնել բարբառների բառապաշարի ուսումնասիրության շնորհիվ:

К АНАЛИЗУ ГОВОРОВ КАРИНСКОГО ДИАЛЕКТА

___ *Резюме* ___

___ *Д. Барнасян* ___

Одним из живых диалектов армянского языка является каринский, которым ныне пользуется довольно большое число армян, проживающих в Ширакском регионе и Джавахетии. Ныне продолжают работы по изучению особенностей говоров этого диалекта, проводятся систематические собирательские работы. Данная статья посвящена словесным названиям, обозначающим утреннее время суток ("утро"). Сравнительный анализ показывает, что временной промежуток от окончания ночи до полудня в разных говорах этого диалекта обозначается словами, которые характеризуются разнообразием синонимов.